



## 19. ՀԱԼՎԱԶԻ ԳՅՈՋԱԼԻ ՀԵՔԻԱԹՐ

Ստամբուլում կենում էր հայոց Սուլթան-Մուրադ Քաջավորը: Սուլթան-Մուրադը մի օր դավրիշի շորեր հագավ ու իրա բեզրգյանի հետ գնաց գեղերը ման գալու: Մի տան վեր էկավ. էս տանը մի աղջիկ կար, նրա վրա պսակվեց ու մի քանի վախտ կացավ էստեղ ա ինքը գնաց էլի Ստամբուլ:

Իրա կնկանը ասեց.— Մարդ ա, կըլնի որ էրեխա բեռես. թե որ տղա կըլնի՝ էս բազբանդը նրա թևը կկապես ու կղրկես Ստամբուլ, որ գա ու ինձ գտնի. թե որ աղջիկ կըլնի՝ մատանիքը կգնես մատը ու կղրկես Ստամբուլ, թող գա ու հարցնի, թե Սուլթան-Մուրադը որդի՞ ա:

Քաջավորը գնաց Ստամբուլ: Անց կացավ ինն ամիս ու էն աղջիկը բերեց մի տղա: էս տղեն մենձացավ ու էթում էր քուչեն հաղ առնում էրեխեքանց հետ: Խալխի էրեխեքը նրան ամանչացնում էին, թե նա բիջիոր ա, հեր չի էլե նրան, եթիմ ա: էս խոսքերը նրա սրտին առան ու էկավ մորը ասեց, որ իրան ասի՝ թե իրա հերը ով ա:

Նա ասեց.— Դու հեր շունես. էրկու դավրիշ էկան էստեղ, մինի հետ ես պսակվեցի ինքը գնաց, ասեց որ աղա ըլնի թևին էս բազ-

բանդը կապի ու զրկի Ստամբուլ, թող հարց ու փորձ անի Սուլթան-Մուրադ թաքավորին:

Էս որ լսեց տղեն, ասեց, որ ինքը կէթա նրա մոտ: Աղջիկը նրա թևից կապեց բաղրանդը ու ճամփու քցեց Ստամբուլ: Տղեն հասավ Ստամբուլ, մի հավաշու մոտ աշկերտ մտավ ու լավ հավա շինել ոռվորեց: Դուռ էկավ ուստի մոտից ու ինքը իրա հմար դուքան դրեց՝ հավա էր ծախում: Էս տղեն շատ սիրուն էր, ու ամենքն էլ նրա մոտ էին դալի հավա առնելու: Սրա անունը դրին Հավաշի գյոզալ, շունքի նա ջատ սիրուն էր: Էս խաբարը վնաց թաքավորի ականջը հասավ: Թաքավորի վեզիրը մի աղջիկ ունեւր՝ Թոփշի խանուժ անուժով: Էս աղջիկը նրան սիրեց, տենալով նրա սիրունութունը: Բերել տվեց քանքանչիք ու ջինել տվեց իրա օթախից մինչև Հավաշի գյոզալի դուքանը գետնի տակից ճամփա: Ամեն գշեր էթում էր թաքուն նրա մոտ:

Թաքավորը իրա վեզիրի հետ գնաց նրա մոտ ղոնաղ: Էն գշեր մնացին նրա դուքանում: Նա շէր գիտում, թե սրանք ինչ մարդիկ են: Գշերվա մի վախտ, պալի տակից ձեն էկավ. սա Թոփշի խանուժն էր, էկել էր նրա մոտ: Նա գնաց խալիչեն հետ քաշեց ու դուռը, որ շինած էր պալի վրա, բաց արեց՝ աղջիկը ներս էկավ: Իրար հետ նստեցին, խոսեցին: Վեզիրն ու թաքավորը զարթուն էին. վեզիրը ուզում էր վեր կենա ու իրա աղջկանը բռնի, համա թաքավորը շթողեց ասելով.

— Տենանք վերջը ի՞նչ կրինի:

Մի քանի սհաթ խոսելուց հետո աղջիկը էլի իրա էկած ճամփով հետ գնաց ու Հավաշի գյոզալը գուռը հետ արեց ու շինեց ղֆուլ: Առավոտը թաքավորը իրա վեզրի հետ գնաց իրա տունը: Մարդ ղրկեց ու Հավաշուն կանչեց իրա մոտ: Թաքավորը հարցրեց, թե նա ով ա: Նա ասեց, որ՝ Սուլթան-Մուրադի որդին ա: Թաքավորը ուրախացավ ու հավատաց նրա ասածին, երբ որ տեհավ թևին կապած բաղրանդը: Ինքը ասեց, որ Սուլթան-Մուրադը հենց իրա հետ խոսողն ա: Հետո թաքավորը, շունքի իրա բեզրգյանի աղջիկն ու իրա տղեն իրար սիրելի էին, պսակեց իրար վրա:

Նրանք ղնացին իրանց մուրազին, դու էլ սիրելի կարգացող<sup>1</sup>, գնա քու մուրազին:

<sup>1</sup> Այս արտահայտությունը հավանաբար բանահավաթինն է (Մ. Կ.):